# ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ (1885-1923 ԹԹ.)

ՍԱՐԳՍՅԱՆ Ս. Թ.

*Մինչ օրս դեռևս ըստ արժանվույն չի գնահատվել արևմտահայ հասարակական-քաղաքական և կրթալուսավորական նշանավոր գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի ազգանվեր գործունեությունը: Տակավին երիտասարդ տարիքում նա եռանդուն կերպով աշխատանքներ էր տանում ծննդավայր Կ. Պոլսում՝ մշտապես առանձնանալով իր յուրակերպ մտածողությամբ և ազգային անարդար կացության նկատմամբ գործուն դիրքորոշումներով: Նա շատ արագ ճանաչվեց արևմտահայ հասարակական շրջանակներում՝ հատկապես մամուլում տպագրված համարձակ հոդվածներով և օսմանյան բռնատիրության անմարդկային դրսևորումների քննադատու-թյամբ[1]:*

*Թիֆլիսում հանդիպելով արևելահայ՝ «այդ տարիներին բոլորի սրտին ու մտքին իշխող» «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունուն և անսալով նրա՝ բուն հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, գործելու հորդորներին, տեղափոխվում է Վան և լծվում կրթալուսավորական ասպարեզում վերափոխումներ իրականացնելու ազգանպաստ գործին, որի «թագն ու պսակը» կազմեց Վանի հայտնի «Կեդրոնական վարժապետարանը»: Զարգացնելով Մ. Խրիմյանի հայրենանվեր մղումները և դրանց զուգակցելով մյուս առաջադեմ մտավորականների հայրենաբաղձ ու ազատատենչ ձգտումները՝ Մ. Փորթուգալյանը դաստիարակեց մի սերունդ, որը, մերժելով միայն օտարի վրա հույս դնելու անօգուտ սովորույթը, շուտով ոտքի կանգնեց հայրենի տունը, պատիվն ու կյանքը պաշտպանելու և ազատ ու մարդավայել ապրելու համար: Օսմանյան բռնատիրությունն իր լրտեսաժանդարմական համակարգով երկար չէր կարող հանդուրժել Մ. Փորթուգալյանի ազատատենչ գործունեությունը: Նա շուտով աքսորվեց Վանից և, խուսափելով ձերբակալվելու իրական վտանգից, թողեց հարազատ եզերքները և հիմնվելով Ֆրանսիայի Մարսել քաղաքում՝ ձեռնարկեց հայ քաղաքական մամուլի առաջնեկ «Արմենիա» թերթի[2] հրատարակությանը:*

---

[1] *Թեև Մկրտիչ Փորթուգալյանի անունը հուշագրություններում և պատմագիտական ուսումնասիրություններում շատ է հիշատակվում, սակայն նրա մասին ընդհանուր առմամբ քիչ է գրված: Դրանց մեջ առանձնանում են ծննդյան 40 և գործունեության 20-ամյակների առիթով ժամանակի գրեթե բոլոր հայ նշանավոր մտավորականների գրած և* Տ. Չէօկիւրեանի *խմբագրությամբ լույս տեսած «Քառասուն տարուան աշխատաւորը, Մկրտիչ Փորթուգալեան» Յարգանքի պսակ քառասունամեայ յոբելեանի առթիւ (Կ.Պոլիս, 1914) և* Ռ. Թորոսեանի *«Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան» (Կ.Պոլիս, 1912) երկերը:*

[2] *Թերթի մասին մանրամասն տե՛ս* Սարգսյան Ս., *«Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014:*

*Երեսունութ տարի շարունակ[3] հաղթահարելով նյութական, կազմակերպչական, քաղաքական ու բարոյական բազմատեսակ դժվարություններ՝ «Արմենիան» կարողացավ անփոփոխ և հստակ ուղեգծով շարունակել իր առաքելությունը: Թերթի կենսագրությունը յուրատիպ տարեգրություն է հայ ժողովրդի պատմության ամենավճռական իրադարձությունների մասին: «Արմենիայի» էջերում ներկայանում են հայ ազատագրական գաղափարախոսության զարգացումները, ֆիդայական պայքարի ընթացքը, Հայկական հարցի շուրջ տեղի ունեցող բազմազույն խարդավանքները, Առաջին համաշխարհային պատերազմը և, վերջապես, Հայոց ցեղասպանության իրական ու ճշմարտացի նկարագիրը:*

*Ցեղասպանության թեման զգալի տեղ է գրավում «Արմենիայի» հրապարակումներում: «Արմենիայի» էջերում աստիճանաբար ուր-վագծվում են Օսմանյան կայսրության ընդհանուր պատկերն ու հայ ժողովրդի իրավազուրկ, մշտապես ունեզրկվելու և նույնիսկ կյանքը կորցնելու վտանգի պայմաններում գոյատևելու տխուր իրողությունը: Սակայն նույնիսկ ամենաճգնաժամային իրավիճակներում թերթն ու նրա խմբագրակազմը՝ անվեհեր Մ. Փորթուգալյան-խմբագրի գլխավորությամբ, երբեք չկորցրին հոգու կորովը, հույսն ու լավատեսությունը և հավատն ապագայի նկատմամբ:*

*«Թուրքահայերի վիճակը եւ մեր պարտքը» խմբագրականում ներկայացնելով երկրից եկող տագնապալի լուրերը՝ հոդվածագիրը նշում է, որ սոսկալի է դարձել Թուրքիայի ներքին գավառների հայերի վիճակը: Երբ մայրաքաղաք Կ. Պոլսում շատ նշանավոր հայ գործիչներ են ձերբակալվում և խոշտանգվում, երբ պատրիարքարանի թագրիրներին ոչ մի կարևորություն չի տրվում, երբ «Ազատամարտ» թերթը, չնայած իր շատ զգուշավոր ոճին, Պատերազմական ատյանի կողմից արգելվում է իբրև ընդդիմադիր, երբ Տրապիզոնի նման մեծ քաղաքում զորքերն առանց քաշվելու «կը կողոպտեն քրիստոնեայների խանութները և կը սպաննեն նաև 3 քրիստոնեայ, ա՛լ կարելի է երևակայել թէ Թիւրքիաի ներքին գաւառների՝ բուն Հայաստանի մէջ ինչե՛ր կը կատարուին»[4]: Իսկ ամենամեծ դժբախտությունն այն է, ցավով արձանագրում է հոդվածագիրը, որ հայերը «Թիւրքին ու Քիւրտին դէմ ինքնապաշտպանութեան միջոցներէ զուրկ կը գտնուին»[5]: Իսկ մեր քաղաքական առաջնորդների անգործությունն ու ժողովրդի ինքնապաշտպանության մասին մոռանալը «կը նշանակէ ժողովուրդը էջ նահատակ դարձնել ուզել»[6]:*

*Հասկանալի պատճառներով (կապի միջոցների չգոյություն, քաոսային իրավիճակ կայսրության ողջ տարածքում, թղթակիցների բացակայություն, անապահով և վտանգավոր իրադրություն և այլն) «Արմենիայում» տպագրվող տեղեկությունները մեծ մասամբ օտարալեզու պարբերականներից*

---

*[3]«Արմենիան» առանց ընդհատումների լույս է տեսել 1885-1923 թթ., 1885-1921 թթ պարբերականի խմբագիրն էր Մկրտիչ Փորթուգալյանը, 1921-1923 թթ.՝ Եղիշե Թորոսյանը:*

*[4] Արմենիա, 1914, թիվ 17:*

*[5] Նույն տեղում:*

*[6] Նույն տեղում:*

*արտատպումներ են կամ դրանցից կատարված հղումներով ու վկայակոչումներով հրապարակումներ: Գնահատելին այն է, որ «Արմենիան» սեփական աղբյուրներից ունեցած տեղեկությունների կողքին, առանց ավելորդ միջամտությունների՝ արտատպելով այդ թղթակցությունները, հնարավորություն է ընձեռել պահպանել և սերունդներին փոխանցել օտարների խոսքն ու վկայությունները եղեռնի մասին:*

*Ավելի շատ տեղ է տրված եվրոպական պարբերականներում հրապարակված նյութերին: Պատերազմի դժոխային քաոսում հայտնված Օսմանյան կայսրությունը զգալով իր մոտալուտ մայրամուտը՝ երկիրը ոչ միայն վերածել էր ժողովուրդների սպանդանոցի, այլն անթափանց պարսպներով ինքնապատվել էր, որպեսզի համաշխարհային հանրությունը չտեղեկանա հայ, ասորի, հույն ժողովուրդ-ների ու ողջ մարդկության դեմ ուղղված իր ոճրագործությունների մասին: «Այժմեան թիւրք կառավարութիւնը,- կարդում ենք «Արմենիայի» «Կացութիւնը Թիւրքահայաստանի մէջ» խմբագրականում, - ոչ թէ համիտեան ոճով՝ այլ արտաքին երևոյթները փրկելով կը շարունակէ Հայերը կոտորել տալ աւազակների և բռնապետների ձեռքով և ինք անմեղ ձևանալ»[7]:*

*Օտար աղբյուրների հենքի վրա արված հրապարակումները երբեմն առանց որևէ միջամտության բառացի թարգմանություններ են, իսկ երբեմն էլ՝ ուղեկցվում են պարզաբանումներով, որոնք լույս են սփռում օտար ընթերցողի համար անհասկանալի տարբեր իրողությունների ու խնդիրների վրա: Այդ հրապարակումներն աչքի են ընկնում կոռեկտ շարադրանքով, փաստերի հնարավորինս ան-կողմնակալ ներկայացմամբ: Եվս մեկ առանձնահատկություն. նույնիսկ այն դեպքերում, երբ տեղեկատվությունը մահազդյժ բնույթ ունի, զգացվում է պետության նկատմամբ որոշ վերապահություն՝ ավելի շատ մեղադրանքներ են հնչում անհատների ու պաշտոնյաների հասցեին, քան թե համակարգի: Բացահայտելով երիտթուրքերի անմարդկային կերպարն ու արյունախում տեսակը՝ թերթը գրում է. «Էնվէր փաշան իշխանութիւնը իր ձեռք անցուցած ատեն յայտարարած էր. «Երեք ամսի մէջ ես աւելին պիտի ընեմ Ապտիւլ-Համիտի երեսուն և երեք տարիի մէջ ըրածէն…»[8]:*

*Թեև հետհամիդյան կառավարիչների՝ երիտթուրքերի, մարդատյաց լինելու և գերմանացիների կողմից հովանավորվելու փաստերը հետագայում հայտնի դարձան բոլորին, սակայն այդ շրջանում արդեն «Արմենիայի» հրատարակիչները հստակ ներկայացնում էին նրանցից, օրինակ, Էնվերին՝ չվախենալով ընդանրացումը տարածել նաև մյուսների վրա. «Գերմանական կուլտուրայի այս աշակերտը իշխանութեան մէջ հաստատուելուն պէս՝ կոտորածների կազմակերպումը սկսաւ: Ութ ամիս է որ օսմանեան հպատակների ճշմարիտ մարդահամար մը պատրաստուած է: Բայց որմէ՞: 1453էն ի վեր թիւրքերը երբէք հոգ ըրա՞ծ էին իմանալու անհաւատների թիւը որոնց կը շահագործեն: Գերման վիճակագրողներ կատարեցին բոլոր աշխատանքը որ ղրկեցին իրենց*

[7] *Նույն տեղում, 1912, թիվ 20:*

[8] *Հայերի կոտորածներին առթով (նույն տեղում, 1916, թիվ 23):*

*հիւպատոսներին և ասոնք ալ զէկուցին սպաներին որոնք զինեցին և ղեկավարեցին ոճրագործները… մնացեալը ծանօթ է»*[9]*:*

*Ներկայացնելով օտարալեզու պարբերականների տեղեկությունները Արևմտյան Հայաստանի կացության մասին՝ «Արմենիայի» տեսաբան Թ. Եղիշեն գրում է. «Արիւնի իրականութիւնն է որ երազավազ յառաջ կընթանայ մեր արիւնի հայրենիքէն: Բոլոր տարագիր աչքերը կարցունքոտին և արիւնակից սիրտերը կը փղձկին տառապանքի և վրէժի ցնցումով մը»*[10]*: Բացահայտելով թուրքերի՝ սարսափելի վայրագություններով սկսած հայաջինջ քաղաքականության արմատները, «Արմենիայի» հոդվածագիր Ա. Թորոսյանն էլ իրավացիորեն պարզաբանում է, որ «Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութիւնը սկսած է իր նպատակի իրագործումը փութացնել, տարիներէ ի վեր ծրագրուած «Հայաստանը առանց հայի» տեսնելու զազանային ցանկութիւնով»*[11]*:*

*Խոսելով անիմաստ ու ոչնչով չպատճառաբանված* **տեղահանության** *և այն ամենաանմարդկային, դաժան մեթոդներով իրականացնելու մասին՝ թերթը մանրամասներ է հաղորդում Արևմտյան Հայաստանի ու կայսրության հայաշատ տարբեր գավառների հայության անմխիթար կացության վերաբերյալ. «Աքսորավայրերը ուղարկելու գործողութիւնը կատարուած է ժանդարմերական ամէնակոպիտ միջոցներով. անոնց նոյնիսկ զլացեր են ջուր և հաց տալ ու առաջին օրէն իսկ ծանր զրկանքներու ենթարկած են»*[12]*:*

*Չխնայելով ո՛չ ծերերին, ո՛չ կանանց ու երեխաներին՝ իշխանությունները բռնի ու վայրագ մեթոդներով տեղահանեցին հայ ժողովրդին, շատերին սպանեցին, իսկ հրաշքով կենդանի մնացածներին քշեցին արաբական անապատներ: Այստեղ էլ չդիմանալով անտանելի պայմաններին՝ շատերը զոհվեցին. «Տասնեակ հազարներով իրենց տուներէն բռնի ուժով վտարուած, անապատներու մէջ թափառական, ծարաւի և սովամահ՝ կիզիչ արեգակին տակ կը մեռնին: … ձմերային քամիներու և բուքերու մէջ կիսամերկ՝ կը զոհուին: Հարիւր հազարներով կիներ և աղջիկներ հարէմներու մէջ բարոյական վշտերու տակ կը կորսուին անդարձ: Հարիւր հազարներով իրբև նշանառութեան առարկաներ զնդակահար գետին կը փռուին կամ կը խողխողուին իրբև սպանդանոցի անասուններ»*[13]*: Մարտիրոսացված ու նահատակվող մարդկանց, բոլոր զոհերի միակ մեղքը «իրենց անմեղ ըլլալն էր»: Ի դեպ՝ որքան էլ թուրքերն ու նրանց անհաջող նմանակ ազերիները բարձր արժեքներից ճամարտակեն, այսօր էլ նրանց մեջ շատ են այնպիսիք, որոնք իրենց այսօրյա և անցյալում եղած անկումների ու անհաջողությունների պատճառները կապում են հայերի հետ, իսկ միակ ելքը տեսնում նրանց արյան մեջ:*

---

*[9] Նույն տեղում:*

*[10] Նույն տեղում, 1915, թիվ 44:*

*[11] Մեր ցավերէն (նույն տեղում, 1916, թիվ 25):*

*[12] Նույն տեղում, 1915, թիվ 47:*

*[13] Բայց այս դեռ հերիք չէ… (նույն տեղում, 1916, թիվ 23):*

«Արմենիայի» հրապարակումներում ներկայացվում է նաև ցեղասպանության կազմակերպիչների անմարդկային ու գիշատիչ էությունը, բացատրվում, որ «արիւնարբու դահիճներուն պարագլուխը, թիւրք կառավարութիւնը, ժպիտը իւր շրթունքներուն վրայ, հայ արեան հեղեղներով գինովցած՝ կը կարծէ Հայկական հարցը միանգամ ընդ միշտ մէջտեղէն վերցնել իր լուծին տակ ապրող ամբողջ հայութեան նահատակութեամբ»[14]: Այդուհանդերձ, հոդվածագիրը նույնիսկ այդ դժնդակ իրավիճակում չկորցնելով հոգու արիությունն ու ապագայի նկատմամբ լավատեսությունը՝ ազդարարում է. «Խե՜ղճ թիւրք կառավարութիւն, չտեսներ թէ Հայկական հարցը ի սպառ բնաջնջել կարծած ժամանակ, ընդհակառակը անոր նոր կեանք կը ներշնչէ»[15]:

Տեղեկատվությունն սկսելով մայրաքաղաք Կ. Պոլսից՝ «Արմենիան» ընդգծում էր հայերին ահաբեկելու, ուժազրկելու և իսպառ ոչնչացնելու երեք կարևոր փուլեր: Շեշտելով, որ հայերի զանգվածային ձերբակալություններն ու կոտորածներն սկսելով Կ.Պոլսից և մի գիշերվա ընթացքում ձերբակալելով նշանավոր բոլոր հայ մտավորականներին՝ թուրքերը հետապնդում էին երկու կարևոր նպատակ: **Նախ**՝ մայրաքաղաքը, որտեղ «շատ օտար աչքեր կային», որոնք կարող էին անցանկալի աղմուկ բարձրացնել և խանգարել իրենց հրեշավոր ծրագրերն իրականացնելուն, հանկարծակի և անսպասելի մաքրել հայերից և **երկրորդ**՝ մտավորականության ոչնչա-ցումով հայությունը կգլխատվեր, և այլևս ավելի դյուրին կլիներ նրան ոչնչացնելու գործը: Ընդ որում, չէին խնայում նույնիսկ այն հայերին, որոնք անգնահատելի ծառայություններ էին մատուցել պետությանն ու թուրք ժողովրդին. «Կ. Պօլսի մէջ ձերբակալուել են բոլոր աչքի զարնող դիրք մը ունեցող Հայերէն շատեր, որոնց մէջ է նաև փոստի և հեռագրի նախորդ նախարար Մարտիկեան Ոսկան էֆէնտին որ օսմանեան փոստը բարեկարգելով մեծ ծառայութիւններ մատուցած էր Թիւրքիային, նախորդ պատրիարք Արշարունի սրբազանը, Տ. Ջաւէն պատրիարքը և այլք անխտրաբար ձերբակալւեր և իբրև դաւադիրներ աքսորուեր են Կ.Պօլսէն»[16]:

Հղում կատարելով Լոնդոնում լույս տեսնող «Դեյլի նյուզ» թերթի «Տանջւող Հայաստան. Ամբողջ բնակչութեան մարմիններ ցրուած ապստամբութեան պատրուակի տակ խժդժութիւններ» վերնագիրը կրող հրապարակմանը՝ «Արմենիան» շեշտում է, որ իշխանությունները ամենազազրելի միջոցներով «հայերը թրքացնելու համար ձեռք առած միջոցները ոչ միայն փողով և թմբուկով հռչակած սահմանադրական սկզբանց բացարձակապէս հակառակ են, այլ նաև իսլամութեան հեղինակութիւն ունեցող մեծամեծաց՝ քրիստոնեաներու հետ վարուելու կերպին համար հրամայած կանոններուն»[17]: Ավելին, իշխանությունները օգտվելով միջազգային խառնակ իրավիճակից՝ մայիսի սկզբից «կնքուած հրամաններ խրկեց կայսրութեան ամբողջ ոստիկանութեան պատուիրելով որ հայ

---

[14]Նույն տեղում:

[15]Նույն տեղում:

[16]Նույն տեղում, 1915, թիվ 44:

[17]Տառապեալ Հայաստան (նույն տեղում, 1915, թիվ 4):

*բնակիչներու վրայ ընդհանուր յարձակում մը ի գործ դրուի: Կ.Պոլսէն ղրկուած ցանկին մէջ անուններնին արձանագրուած բոլոր Հայ տուներուն վրայ յանկարծօրէն կէսգիշերին խոյացաւ: Արուները ձերբակալուելով տուներնին «թուղթ» գտնելու համար խուզարկուեցան, որմէ յետոյ, տարագրութեան և ցրուումի դրութեան գործադրութիւնը սկսաւ տեղի ունենալ որ այժմեան հակահայկական ալեկոծումի ամենաասոսկալի պատկերն է»*[18]*:*

*Ի դեպ՝ «Արմենիայի» հաղորդած տեղեկությունների համաձայն, երիտթուրքերի պարագլուխները հայոց եղեռնը ձեռնարկելիս նախ և առաջ իրենց մարդակեր սլաքն ուղղեցին ՀՀ Դաշնակցության դեմ, որովհետև ի դեմս այդ կուսակցության, տեսնում էին որպես քիչ թե շատ դիմադրելու կարող ուժի: Թերթի բոլոր լուրերում որպես հայության գերակա ուժ առանձնանում են Դաշնակցություն կուսակցությունն ու նրա գործիչները: Ահավասիկ՝ վկայակոչելով Օդեսայում լույս տեսնող «Պ.Վէտէմոստի»-ին, թերթը տեղեկացնում է. «Կ. Պօլսի ոստիկանութիւնը շրջապատեց «Դաշնակցութիւն» կուսակցութեան օրգան Ազատամարտի խմբագրատունը և կալանաւորեց այնտեղ գտնուող անձերը»: Ապա ավելացնում, որ մեծ տպավորություն է գործել հատկապես նախկին «կաբինետի հայազգի անդամներու, որոնք դէմ էին Թիւրքիոյ՝ պատերազմի մասնակցութեան»*[19]*, ձերբակալության փաստը: Ջարդարարներն իրենց քստմնելի գործողություններում բոլորովին անկաշկանդ էին, իսկ հաճախ էլ՝ տարբեր անհիմն պատճառաբանություններով փորձում էին արդարացումներ գտնել իրենց տմարդի արարքների համար. «Պաշիպօզուքները անպատիժ կը խուժեն Հայերի բնակարանները և կզբաղուին կողոպուտով: Թալէաթ պէյը աշխատելով արդարացնել այդ ճնշումները, ըսեր է օրագրողներին որ իբր թէ Կ.Պօլսի Հայերը մատ ունին Վանի ապստամբութեան մէջ»*[20]*: Շարունակելով ՀՅԴ-ի դեմ ընդգծված հալածանքների թեման՝ «Արմենիան» գրում է. «Խուզարկութեան ենթարկեցին Վռամեանի ազգականներու և միւս կալանաւորներու տները, սարսափի մատնելով այդ ընտանիքները: «Ազատամարտ»ի խմբագրութիւնը բռնագրաւուած է, բացի խմբա-գրութեան ամբողջ արխիւէն, ոստիկանութիւնը գրաւած էր նաև դրամարկղը, ուր կար 540 ոսկի»*[21]*:*

*Թերթի վկայությամբ, ձերբակալություններն ու մահապատիժներն ավելի դաժան ու անմարդկային ձևերով էին իրականացվում հատկապես* ***գավառներում****: Այստեղ նշենք մի կարևոր հանգամանք. մինչև վերջերս ժամանակակիցների հուշերում, գեղարվեստական ստեղծագործություններում, երգերում, օտար աղբյուրներում, և նույնիսկ հայ պատմագիտական ուսումնասիրություններում արտահայտվում էր այն գաղափարը, որ հայերն ամենուրեք (կամ գրեթե ամենուրեք) հլու-հնազանդ, սպանդանոց առաջնորդվող կենդանիների նման մորթվել են: Հաճախ կարելի է ականջալուր լինել, թե, իբր, «չի կոտորվում այն ժողովուրդը, որը չի ուզում*

---

[18] *Նույն տեղում:*

[19] *Նույն տեղում, 1915, թիվ 47:*

[20] *Նույն տեղում, 1915, թիվ 45:*

[21] *Նույն տեղում:*

*կոտորվել» բանաձևումը: Եղել են դեպքեր, որ քիչ էր մնում հայտարարեին, թե հայերը շատ էին ուզում(՞), դրա համար էլ մորթվեցին: Միանգամայն սխալ մոտեցում է սա, եղեռնագործությունն ու եղեռնագործին քողարկող, անուղղակի արդարացնելու փորձ: Իսկ հայ ժողովրդի պարագայում՝ որևէ քննություն չբռնող տեսակետ:*

*Խնդիրն այն է, որ հարվածը միանգամից եղավ, գրեթե անսպասելի: Իսկ երբ հնարավոր դարձավ մի փոքր ուշքի գալ, հայերն ամենուրեք դիմում էին ինքնապաշտպանական գործողությունների*[22]*: Բայց, ցավոք, ուժերը խիստ անհավասար էին, իրավիճակն ամբողջովին աննպաստ հայերի համար: Ոչ պակաս դերակատարություն ունեցավ 1908 թ. հեղաշրջման իրողությունը, որը հաշիշա-նման թմբիրի պես շշմեցրեց ժողովրդին: Դրան գումարվեց նաև մեր քաղաքական ղեկավարների անհեռատես ու ինչ-որ տեղ նաև մորթապաշտ գործելաոճը, որը բացասաբար ազդեց իրադրության ընկալման վրա, և ժողովուրդը գրեթե ամբողջովին կորցրեց իր զգոնությունը:*

*«Արմենիան» տեղեկացնում է, որ «թիւրք կառավարութիւնը ամէն տեսակ նեղութիւններ կուտայ* ***Մուշի*** *դաշտը գտնուած Հայերին այնպէս որ ժողովուրդը ստիպուած է ինքնապաշտպանութեան միջոցների դիմել և ընդհարումներ անպակաս են թիւրք զօրքերին և հայ ժողովրդին միջև: Այդպիսի ընդհարում պատահած է Ցրօնք գիւղին մէջ ուր կառավարութիւնը 300էն աւելի քիւրդ անկանոն զօրքեր ղրկելով, գիւղը կողոպտել և գիւղացիներն ալ իբրև խռովայոյզներ ձերբակալել ու բանտարկել տուած է»*[23]*: Անհնազանդության և պայքարի մի դեպք էլ թերթը վկայակոչում է Գոմս գյուղի օրինակով. «Գոմս գիւղին մէջ միւտիրը, իրեն հետ առնելով շատ մը ժանտարմներ որոնց մէջ և յայտնի ոճրագործ Մէհմէտ Էմինը որ 9 հայ սպաննած է արդէն, կերթայ շատ մը նեղութիւններ կուտայ հայ գիւղացիներին: Գիւղացիները ճարահատ կըսպաննեն Մէհմէտ Էմինը և անոր հետ մէկտեղ 6 ժանտարմներ»*[24]*:*

*Նկարագրելով համատարած ջարդերից փոքր թվով հայերի՝ հրաշքով փրկվելու և Բուլղարիա հասնելու եղելությունը՝ թերթը գրում է. «15էն 50 տարեկան և արական սեռին պատկանող բոլոր հայերը երկրին ներսերը կը ղըրկուին ուր ընդհանրապէս թիւրքական գիւղերի մէջ կը ցրուեն զանոնք իսլամացնելը դիւրացնելու նպատակով. 300.000ի չափ հայեր այդպէս հեռացուած են արդէն իրենց տեղերէն, մեծ մասը կոտորուած»*[25]*: Ապա ամփոփելով տեղեկատվությունը՝ արձանագրում է. «Թիւրքերը Մուշի շրջանի բոլոր արու հայերը կոտորեր են. 5000 հոգի միայն կրցեր են փախչիլ կոտորածէն»*[26]*:*

---

[22]*Հայերի ինքնապաշտպանական կռիվների մասին մանրամասն տե՛ս* Սահակյան Ռ., *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Ե., 2005:*

[23]*Արմենիա, 1915, թիվ 45:*

[24]*Նույն տեղում:*

[25]*Նույն տեղում, 1915, թիվ 4:*

[26]*Նույն տեղում:*

*Թերթի վկայությամբ, ոչ մի հայաշատ բնակավայր չի խուսափել նախճիրից: Փոքր Հայքի* ***Շապին Գարահիսար*** *քաղաքը, չերկնչելով տասնապատիկ գերակշռող թշնամական ուժերից ու արնախում խուժանից, հերոսաբար պաշտպանվեց. «...ողբերգական դէպքերի թատր դարձեր է: Հայերի ենթադրեալ ապստամբութիւն մը զսպելու համար ղրկուած թիւրք զօրքերը կրակի տուեր են քաղաքը: Հայերի բնակած ամբողջ թաղէն զատ՝ յոյների եկեղեցին և առաջնորդարանը նոյնպէս այրուած են: Մահերի մասին կոնկրետ տեղեկութիւն մը չէ առնուած, բայց հաւանօրէն շատ մեծ կը լինի»[27]:*

*Փարիզի «Le journal» օրաթերթում Անրի Բարբյուսի՝* ***Էրզրումից*** *գրած թղթակցության հիման վրա «Արմենիան», հայտնում է, որ 1915 մայիսի 20-ին «պատերազմական նախարար Էնվէր փաշան, Երիտասարդ. թիւրք գոմիթէի որոշման համաձայն, հրամայեց հայերի տեղահանութիւնը Հայաստանի, Անատոլիի և Կիլիկիայի նահանգներէն դէպի Պաղտատի գծին հարաւակողմը գտնուող արաբական երկիրները»[28]: Որոշված էր նաև գրավել և կողոպտել նրանց ամբողջ գույքը: Հայտնվում էր նաև, որ Կարինից եկած լուրերը շատ սոսկալի էին և, որ ամենասարսափելին էր՝ «ընդհանուր կոտորածի շշուկներ կը պտտէին»[29]: Որպես ապացույց վկայակոչելով նաև տեղում ԱՄՆ-ի ներկայացուցիչ, միսիոներ Ռոպ. Ս. Սթափլդոնին, որն «անզգայ հանդիսատեսի մը դերին մէջ չէ որ ներկայ գտնուած է հայ ժողովրդի մարտիրոսութեան», այլև վտանգելով իր անձը, քաջասիրտ կնոջ աջակցութեամբ «փրկած է 120 հայեր (աւելի կը յարմարի ըսել հայուհիներ որովհետև այդ թուէն մինակ վեցը այր են) որոնք միայն մնացած էին Էրզրում քաղաքին մէջ ուր կոտորածէն առաջ 18.000 հայ կար»[30]:*

*Ռոպ. Ս. Սթափլդոնը վկայում է, որ տարբեր վայրերում իրեն հանդիպող մազապուրծ եղած սակավաթիվ հայերը պատմում էին, որ իրենց ընտանիքները կոտորվել են, ունեցվածքը հարքունիս է գրավվել, իսկ տեղաշարժերի ժամանակ աննկարագրելի վայրագությունների զոհ են դարձել հազարավոր անմեղ մարդիկ: Այդ զաղթի համատարած սպանդից ու անարդարություններից խուսափել չի հաջողվել գրեթե ոչ ոքի: «Այն կարաւանը որ դէպի Խարբերդ գնաց,-շարունակում է վկայել ամերիկացի միսիոները, - աննկարագրելի վայրագութիւնների զոհ եղաւ: Էրզրումի բժիշկ Թաշճեանի երկու աղջիկներէ մին, սարսափէն խելագարած, յաջողեցաւ երկու անգամ խուսափիլ և երկու անգամին ալ նորէն բռնուեցաւ: Ինք և իր քոյրը Խարբերդի հարէմները կը գտնուին այժմ…»[31]:*

*Թղթակցի խնդրանքով ԱՄՆ-ի հյուպատոսը առանձնացնում է նաև Էրզրումի կոտորածի գլխավոր պատասխանատուներին. «Քէմալ փաշա, անգութ ոստիկանութեան պետը որ ասկէ առաջ նոյն պաշտօնը կը վարէր Ատանայի մէջ, այդ*

---

*[27] Նույն տեղում:*

*[28] Մանրամասնութիւններ Էրզրումի կոտորածին վերաբերեալ (նույն տեղում, 1916, թիվ 47):*

*[29] Տառապեալ Հայաստան (նույն տեղում, 1915, թիվ 4):*

*[30] Մանրամասնութիւններ Էրզրումի կոտորածին վերաբերեալ (նույն տեղում, 1916, թիվ 47):*

*[31] Նույն տեղում:*

*քաղաքի Հայերի կոտորածին ժամանակ. օսմանեան խորհրդարանի երեսփոխան և «Միութիւն և Յառաջդիմութիւն» կուսակցութեան անդամ Մէֆուլլահ և իր զաւակները...»[32]: Հյուպատոսը վկայում է նաև, որ «գերման սպաները չմասնակցեցան կոտորածին. անոնք գոհացան ամէն բան կատարելու թոյլատրելով և իրենց համար մէկ քանի դեռատի հայ աղջիկներ առևանգելով»[33]: Իսկ ինչ վերաբերում է գերմանացիների՝ Հայոց ցեղասպանությանը մեղսակից լինելուն, ապա Ա. Բարբյուսը հայտարարում է աներկբայորեն. «Երիտասարդթիւրքերը, պաշտոնական Գերմանիայի հաւանութեամբ, արիւնի ալիքների մէջ խեղդած են Հայաստանը»[34]:*

*«Le journal»-ի թղթակից հաղորդում է նաև, որ տեղի «Միութիւն և Յառաջդիմութիւն կուսակցության ժողովատեղիի «շինութեան գործածուած բոլոր քարերը հայերի գերեզմանատան տապանաքարեր են...»[35]:*

*«Արմենիայի» խմբագրակազմին հաջողվել էր նաև ձեռք բերել ու հրապարակել Խարբերդում ամերիկյան հյուպատոսի 1915 թ. թիվ 11 պաշտոնական տեղեկագիրը: Հյուպատոսը ներկայացնում է թուրքերի բարբարոսական գործելակերպի բազմաթիվ դրվագներ՝ իրենց վավերագրական հավաստիությամբ[36]:*

*Ոչ պակաս տխուր ու գերլարված վիճակ էր ստեղծվել **Վանում:** Այստեղ նույնպես թուրքական իշխանությունները դիմում էին ամեն տեսակ ստոր ու անօրինական քայլերի՝ հայերին տեղահանելու ու կոտորելու իրենց մտադրությունները «պատճառաբանելու և արդարացնելու» համար. «Ճավիտ փաշան եկեր պահանջեր է Վանի հայերէն 6.000 ոսկի, 6.000 հրացան և 700 զինուորացու երիտասարդ, 3 օր պայմանաժամ տալով: Յետոյ Վռամեանին իրեն մօտ կանչեր է, Վռամեան սպաննուած է և ժողովուրդը զրգռուեր է: Թիւրք զօրքեր Վանի գիւղերին մէջ 5-6.000 հայեր կոտորած են, բազմաթիւ գիւղեր կրակի տրուած. բնականաբար հայերի կողմէն ալ դիմադրութեան շարժումներ երևան կուգան որոնք կը տարածուին»[37]:*

*Վանում հասունանում էր Արամ Մանուկյանի ընդհանուր և Արմենակ Եկարյանի ռազմական ղեկավարությամբ հայերի գոյակռիվների զարդապսակը հանդիսացող 1915 թ. հերոսական ինքնապաշտպանությունը[38], որն, ի դեպ, (Մուսա լեռան գոյակռվի հետ) ամենաարդյունավետն ու հաղթականը եղավ՝ իրական ոչնչացումից փրկվեց 150 հազար վասպուրահայությունը: Թերթը գրում է. «Վանի հայերը դիմադրութեան սկսեր են, նրանք յաջողեր են քաղաքն իրենց ձեռք անցունելով շարունակել դիմադրութիւնը, սպասելով ռուս զօրքերի օգնութեան հասնելուն»[39]:*

---

*[32] Նույն տեղում:*

*[33] Նույն տեղում:*

*[34] Տեղահանուած հայերի տառապանքը աքսորի ճանապարհին վրայ (նույն տեղում, 1916, թիվ 49):*

*[35] Նույն տեղում:*

*[36] Նույն տեղում:*

*[37] Նույն տեղում:*

*[38] Հայ ժողովրդի պատմություն, չորս հատորով, հ. 3, Ե., 2010, էջ 557-563: Տե՛ս նաև Վանի հերոսամարտը (Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, Ե., 2013, էջ 163-170):*

*[39] Արմենիա, 1916, թիվ 49:*

*Վկայակոչելով ֆրանսիական մի քանի թերթեր՝ «Արմենիան» տեղեկացնում էր, որ շնորհիվ հերոսական գործողությունների, տոկունության և աննա-խադեպ միասնականության, հայերը փառավոր հաղթանակ տարան թվապես բացարձակորեն գերակշռող և նոր ու կատարյալ զենքերով զինված թուրքական կանոնավոր բանակի և մեծաքանակ թուրք ու քուրդ խուժանի դեմ: Շուտով ռուսական բանակի առաջապահ հայ կամավորական ջոկատները հաղթականորեն մտան Վան. «Հայ կամաւորները, որոնք զիրկընդխառնուեցան Վանի իրենց եղբայրներուն հետ և թերևս պիտի համբուրուին վաղը Մուշի և Սասունի իրենց արիւնակիցներուն հետ: Հայ ժողովուրդը մեծ ոգևորութեամբ ընդունեցին ռուս զօրքերի Վան մուտքը: Բնակիչները փողոցներին մէջ խռնուած էին զօրքերի անցնելիք ճանապարհին վրայ. կերգէին ռուսական ազգային երգը, եռանդագին կեցցէներ կաղաղակէին և ծաղիկներ կը նետէին: Աղ ու հաց մատուցուեցան սպայներին»[40]:*

*«Արմենիայի» տեղեկատվությունը գուժում էր նաև* **Տրապիզոնի** *հայության անմխիթար վիճակի մասին: Սանձազերծված պատերազմի հետևանքով ռազմանավերի ռմբահարումներից ամբողջովին ավերված քաղաքում «տիրում է սոսկալի կրիզիս, ժողովրդի ունևոր մասը փախել է, խանութները փակ են, տիրում է կատարեալ մեռելութիւն: Տրապիզոն - Էրզրում խճուղու վրայ թափւած են մեծ քանակութեամբ մարդկանց և ուղտերի դիակներ: Էրզրումում ձերբակալել են հայերի մեծ մասին, մեծ երկիւղ կայ կոտորածի»[41]:*

*Դեպքերը զարգանում էին կայծակի արագությամբ: Ականատեսի վկայությամբ, քաղաքից հեռանալուց առաջ թուրքերը «գլխովին կոտորել էին հայերը: Փրկւել են միայն 100-120 չետնիկներ, որ վարել են պարտիզանական կռիւ: Կոտորւել և խեղդւել են և շրջակայ գիւղերի հայերը»: Ընդհանուր առմամբ, «խստութիւնները, որ գործադրւել են հայերի վերաբերմամբ Տրապիզոնում, գերազանցում են այն բոլոր գազանութիւններին, որոնց ենթարկւել են հայերը միւս վայրերում»[42]:*

*Որոշ ժամանակ անց ռուսական զորքի հետ քաղաք մտած Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը հրամանատարության հրահանգով հատուկ զեկուցագիր ներկայացրեց, որը նույնությամբ հրապարակվեց «Արմենիայում»: Զեկուցագիրը վկայում է, որ միայն տեղացի հույների երևան հանած լավագույն հատկությունների շնորհիվ փրկվել են ընդամենը 50 երեխա, որոնք բոլորն էլ «հիւանդ տեսք ունին և սարսափով էին նայում ամեն մի օտարականի վրայ»: Ամենաողբերգականը նաև այն էր, որ կենդանի մնացածները ևս հոգեբանորեն սպանված վիճակում էին[43]:*

*«Արմենիան» գրում էր, որ հույն ազգաբնակչությունը և հնարավորություն ունեցող այլ անձինք սիրով էին վերցնում հայ երեխաներին: Այսպես՝ միայն հույն մետրոպոլիտը «վերցրել էր 200 երեխայ, ամերիկական հիւպատոսը-300»[44]: Սկզբում*

---

*[40] Նույն տեղում:*

*[41] Հայերը Թուրքիայի մէջ (նույն տեղում, 1915, թիվ 47):*

*[42] Իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը Տրապիզոնի մասին (նույն տեղում, 1915, թիվ 44):*

*[43] Նույն տեղում:*

*[44] Նույն տեղում:*

թուրքերը չէին արգելում մինչև 10 տարեկաններին հովանավորելը, բայց հայկական ջարդերի բուռն շրջանում «իշխանութիւնը պահանջեց, որ երեխաներին յանձնեն կառավարական որբանոցը»[45]: Այստեղ սկզբում կար որոշ խնամք, բայց «յետոյ երեխաները չքացան անհետ: 10-11 տարեկան աղջիկներին բաժանել են զանազան անձանց մէջ, իբրև հարճեր»[46]: Թերթի տեղեկացմամբ, երեխաներից մի քանիսը «փրկւած են տեղական պարսիկների ձեռքով»[47]:

Զեկուցագրում ասվում է, որ հայերի կոտորածը «կատարուել է մի նախորոշւած ծրագրով, և որ այդ գործը ղեկավարել է թիւրք կառավարութիւնը, որը խստօրէն հալածել է նրանց, ովքեր որևէ օգնութիւն են հասցրել հայերին»[48]: Տեղացի հույները նաև հայտնել են, որ «ծովն է նետւած մօտ 800 հայ երեխայ»[49]:

Ինչ վերաբերում էր հայերի գույքին, «Արմենիայի» այդ հրապարակումից տեղեկանում ենք, որ հայերին պատկանող 1000 տները «յարքունիս են գրաււած, թանկարժէք իրեղէնները ժողոված են մէկ տան մէջ, որը հետոյ թալանւեց և տարւեց թիւրքական տները»[50]:

Մեկ այլ հրապարակման մեջ, վկայակոչելով Փարիզում լույս տեսնող «Մատեն» օրաթերթի տեղեկատվությունը, «Արմենիան» ներկայացնում է այն տխուր իրողությունը, որ Տրապիզոնի կոտորածից փրկված «հարիւր հայերը այս քաղաքի 15.000 հայերէն մնացածներն են»[51]:

Ավելի դաժան վերաբերմունքի արժանացան հատկապես այն բնակավայրերը, որոնք կայսրության գոյության գրեթե բոլոր ժամանակներում իրենց ազատատենչ ու կիսանկախ կարգավիճակով սուր ոսկորի նման խրվելմնացել էին թուրքերի կոկորդում: Այդպիսի՝ թեև պակասավոր, սակայն ինչ-որ չափով ազատություն միշտ վայելել էին **Սասունն** ու **Զեյթունը**, որոնց նկատմամբ թուրքական իշխանությունները շարունակաբար վարվում էին այն գիշատչի նման, որին շատ մոտիկ, շատ համեղ, սակայն անհասանելի որս կա: «Ներկայ ժամանակի հակահայ ընդհանուր շարժման սոսկալի վրիժառութեանց օրինակներուն մէջ Զէյթուն քաղաքի բնակչաց վրայ գործադրուածին նմանը գոյութիւն չէ ունեցած» - գրում է «Արմենիան»[52]: Ավելի քան 20.000 բնակիչ ունեցող այս բնակավայրը «իրապէս երբէք թրքաց կողմէ բոլորովին պարտուած չէր»: Լեռնային բարձր ու գրեթե անմատչելի դիրքը կիսաանկախ կարգավիճակ էր ապահովել մշտապես իրենց ազատության համար պայքարող բնակչության համար: Նրանց ծնկի բերելու նպատակով իշխանությունները կանոնավոր զորք ուղարկեցին տեղի «երիտասարդները զինուորական ծառայութեան հարկադրելու»: Տեղացիները, սակայն, «համակերպելու տեղ յարձակեցան թուրք զինուորներուն վրայ որոնցմէ 300ը սպաննեցին և այս

[45] Նույն տեղում:

[46] Նույն տեղում:

[47] Նույն տեղում:

[48] Նույն տեղում:

[49] Նույն տեղում:

[50] Նույն տեղում:

[51] Հայերի կոտորածներին առթով (նույն տեղում, թիվ 23, 1916):

[52] Յակոբեան Կ., *Տառապեալ Հայաստան* (նույն տեղում, 1915, թիվ 4):

կերպով իրենց ձեռք բերած յաւելեալ զէնքերով պատրաստուեցան որոշապէս դիմադրելու»[53]: Դրանից հետո քաղաքի վրա «զօրաւոր զօրագունդ մը եկաւ ու այն ատեն թուրքերը գործադրեցին տարագրելու ծայրայեղօրէն զանոնք և ջրուելու նորահնար դրութիւնը»[54]: Չբավարարվելով դրանով՝ հայերին իսպառ արմատախիլ անելու մտադրությամբ (շրջակա լեռներում ու անտառներում թաքնված էին բնաջնջումից զգալի թվով մազապուրծ եղած հայեր), «Թրակիաէն զաղթած 20.000 թուրք տարուեցան Զէյթուն ուր բնակեցուցին այն տուներու մէջ որոնք դարերով հայ ընտանիքներու պատկանած էին»[55]:

Ամփոփելով անցած՝ 1915 թվականը, «Արմենիան» այն համարում է զուլումի, մարդկության մեծագույն ողբերգության, «քաղաքակիրթ ու ասպետական» Եվրոպայի աննախադեպ անկման, աշխարհի ու մարդկության նախահոր՝ Նոյի հիշատակը պղծելու, հայի արյամբ խրախճանքներ կազմակերպելով, նրա ինչքն ու տունը թալանելով ու յուրացնելով, թուրք հրոսակի՝ իր բարբարոս արմատներին վերադառնալու մղումների, «արիւնահեղութեան եւ քանդումի» տարի[56]: «Դժոխքը և Թիւրքիա ոչ մէկ տարբերութիւն ունին իրարմէ, ինչ որ պատմութիւնը չէ գրած, ինչ որ մարդը չէ լսած ու տեսած, կը տեսնուի և կը լսուի հոն»[57]:

Ցեղասպանության խնդիրները քննարկելիս «Արմենիան» ցավով նշում է, որ մարդիկ երբեմն հայերին են մեղադրում իրենց կրած անլուր տառապանքների համար և այդ տեսակետը հաստատելու նպատակով վերագրում են եղած ու չեղած, իրական ու արհեստածին մեղքեր: Այդ բնույթի հրապարակում է «Le journal»՝ թերթի թղթակցի՝ Էրզրումից ուղարկած նյութը, որը նույնությամբ արտատպված է «Արմենիայում»: Հոդվածագիրը զարմանում է, որ հայերը «երբէք չեն կրցած միաբանիլ և կազմակերպուիլ, ինքզինքնին պաշտպանելու դահիճներին դէմ, այլ և վերջնականապէս թոթափելու համար թիւրքական լուծը»[58]: Շարունակելով թեման՝ նա հարցնում է. «Ինչո՞ւ հայերը չեն փորձած երբէք, ընդհանուր ապստամբութեամբ մը, վերստին ձեռք բերել այն ազատութիւնը զոր կը յայտարարեն իբրև գերագոյն բարիք մը»[59], ապա փորձում է ինքը գտնել պատասխանը: Նա կարծում է, որ լեռնաբնակ հայերը «ճնշողին դէմ պայքարը չեն դադրեցուցած դարերէ ի վեր: Միշտ զինուած են, նոյն իսկ իրենց արտերը մշակելու ատեն, ինքզինքնին պաշտպանելու համար» և անդադար «դիւցազնական կերպով կը կռուին, թիւրք վարչութեան կեղեքումներին և աւազակների անդադար արշաւանքներին դէմ»[60]: Նույնը չի կարելի ասել Հայաստանի այլ վայրերի հայերի մասին, քանի որ նրանք ապրում էին հաղորդակցության ճանապարհներից զուրկ «ընդարձակ երկիրների վրայ,

---

[53] Նույն տեղում:

[54] Նույն տեղում:

[55] Նույն տեղում:

[56] Նոր տարի (նույն տեղում, 1916, թիվ 23):

[57] Ի՞նչ կանցնի կը դառնայ Թուրքիոյ մէջ (նույն տեղում):

[58] Հայաստանի կոտորածները դիմադրութիւն ջարդարարներին (նույն տեղում, 1916, թիվ 4):

[59] Նույն տեղում:

[60] Նույն տեղում:

ցանցառ բնակչութեամբ, վրանաբնակ և աւազակ թիւրքերի և քիւրտերի հետ, որոնք բնական թշնամիներն են նստակեաց և աշխատասէր հային»[61]:

Իրողությունն այն է, որ կոտորածների ժամանակ հայերը փորձեցին դիմադրություն կազմակերպել «ամենուրէք ուր այդ կարելի էր», սակայն Օսմանյան կայսության պետական համակարգն իր հզոր մամլիչով, ծրագրված քաղաքականությամբ, կարողանում էր հերթով արյան մեջ խեղդել իրարից անջատ, վատ զինված, հաճախ էլ սխալ կազմակերպված ինքնապաշտպանական գոյամարտերը[62]. «Այսպէս պատահեցաւ Մարզուանի մէջ ուր դիմադրութիւնը խիստ տկար եղաւ. Շապին Գարահիսարի մէջ ուր թէև աւելի ուժեղ եղաւ, սակայն շուտով ճնշուեցաւ այն ոյժերէն զորոնք տեղական իշխանութիւնը իր ձեռքի տակ ունէր, և զինուած թիւրք խուժանէն. Խարբերդի մէջ ուր սարսափելի տեսարաններ եղան»[63]: Հայերի աննկուն ոգին, սակայն, շարունակում էր դիմակայել նույնիսկ ամենաանհավանական իրավիճակներում, ընդգծում է հոդվածագիրը և փաստում, որ ամենասկզբում մտավորականներին ձերբակալեցին և հիսուն հոգիանոց խմբերով գիշերները դուրս էին հանում քաղաքից ու կոտորում: Կիլիկիացիները նույնպես դիմադրություն կազմակերպեցին, - վկայում է նույն հոդվածագիրը, - սակայն ուժերը խիստ անհավասար էին և «Զոք Մարզուանի անվեհեր ժողովուրդը չկրցաւ ինքզինքը պաշտպանել և ստիպվեցաւ զաղթել»[64]: Զեյթունն էլ հերոսաբար դիմադրեց, բայց նա էլ ի վերջո ընկավ, իսկ թուրքերը ոչ միայն տիրացան հայերի ողջ ունեցվածքին, այլև «քաղաքին անունն անգամ փոխուելով, «Սիւլէյմանիէ» կոչեցին»: Զգալի թվով հայեր, սակայն, բարձրանալով լեռները, կարողացան փրկվել:

Հետագա տարիներին լույս տեսած «Արմենիայի» համարներում ևս անդրադարձներ կան Հայոց ցեղասպանությանը: Դրանց բնորոշ է մի առանձնահատկություն՝ լայնահ, հիմնականում օգնություն հայցող, աշխարհի հզորների գութն ու ուշադրությունը ակնկալող հոդվածներին փոխարինելու են գալիս կորստի ցավի ու ողբերգության զգացումից բխող վրեժի, մեղավորներին պատժելու կոչ-հորդորներով հարուստ հրապարակումները:

Մ. Փորթուգալյանի հավատարիմ գաղափարակից և «Արմենիայի» անկոտրում նվիրյալ Թ. Եղիշեն, տեղեկանալով Մայր Հայրենիքում տեղի ունեցող եղեռնագործությանը՝ մեծ ցավով գրում է. «Արիւնի իրականութիւնն է որ երազավազ յառաջ կընթանայ մեր արիւնի հայրենիքէն: …Արիւնակից սրտերը կը փղձկին տառապանքի և վրէժի ցնցումով մը»[65]: Շեշտելով հայության կենսունակությունն ու հարատևելու անբացատրելի կարողությունը՝ հոդվածագիրը մարտահրավեր է նետում հայ ժողովրդի բոլոր թշնամիներին և նույնիսկ եղեռնի ծայրահեղ ծանր տարում անարգանքի սյունին գամում բոլոր հոռետեսներին՝

---

[61] Նույն տեղում:

[62] Այս իմաստով դրվատելի բացառություն եղան, ցավոք, միայն Վանի և Մուսա լեռան ինքնապաշտպանական կռիվները:

[63] Հայաստանի կոտորածները դիմադրութիւն ջարդարարներին (նույն տեղում):

[64] Նույն տեղում:

[65] Նույն տեղում, 1915, թիվ 44:

*նրանց համարելով թուլամորթներ: Երբեք պետք չէ հույսը կորցնել, եզրակացնում է Եղիշեն, առավել ևս, որ «ոչ միայն ոչխարներու արիւնն է որ կը հոսի Հայաստանի ձորերէն, այլ և առիւծներու վրիժագոչ արիւնը: Կը լսենք հայկական կոտորածները, կը լսենք և ըմբոստ հայերու վրէժը»[66]:*

*Թ. Եղիշեն չի ընդունում նաև այն պնդումները, թե հայերն այլևս բացի հառաչելուց և իրենց անդարմանելի ցավերը սգալուց, ոչինչ չեն կարող անել: Ընդհակառակը, համոզված հայտարարում է հոդվածագիրը, հենց այդ պահին է, որ «Հայերէն կըսպասուի գործ և կը պահանջէ շատ բան հատկապէս արտասահմանի հայերէն»[67]: Այդ հարցում անփոխարինելի դերակատարություն առանձնացնելով արևելահայությանը՝ հեղինակը գոհունակորեն շեշտում է, որ Կովկասից եկող տեղեկությունները ոգևորիչ են ու հույս ներշնչող. «Հոն նոր թափով ոյժ կը տրուի հայ կամաւոր գունդերու բազմանալուն, նկատելով որ ոչ մէկ արտաքին դիւանագիտական միջոց կրնայ արգիլել թիւրքերը հազարաւոր հայերու անմեղ արիւնի մեղքին մէջ մտնելէ»[68]:*

*Հետագա տարիներին ևս «Արմենիան» անդրադառնում էր եղեռնին, և այդ հրապարակումներն ամբողջությամբ ծանր հառաչանքի են նման, անբուժելի ցավ ու մորմոք կա դրանցում: Իսկ ավելի ուշ նկատելի են վրեժի ու հատուցման կոչեր: Արժանին հատուցելով թերթի խմբգրակազմին՝ նշենք, որ ամենածանր պահին անգամ նրանք չհուսահատվեցին, չկորցրին հոգու կորովն ու միշտ լավատեսորեն նայեցին ապագային:*

## ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ "АРМЕНИЯ" (1885-1923 гг.)

САРГСЯН С. Т.

Резюме

Газета "Армения" издавалась в 1885-1923 гг. в Марселе. На ее страницах освещались все животрепещущие вопросы и важнейшие события, имевшие место в армянской действительности. Особое внимание газета уделяла публикациям, посвященным геноциду армян, организованному и осуществленному младотурками в 1915 г.

---

[66] Նույն տեղում:

[67] Նույն տեղում:

[68] Նույն տեղում:

# THE REFLECTION OF ARMENIAN GENOCIDE ON THE PAGES OF "ARMENIA" (1885-1923)

S. SARGSYAN

Abstract

«Armenia» was published from 1885-1923 in Marseilles. The issue covered all the problems and vital events of the Armenian reality. The newspaper especially highlighted the pieces on Armenian genocide organized by young Turks in 1915.